ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ԿՆՔՎԱԾ N 289 ՊԱՅՄԱՆԱԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 19 » « 11 » 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի (այսուհետ՝ պատվիրատու), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայկ» կինոստուդիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար՝ Ծ. Սողոմոնյանի (այսուհետ՝ կատարող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման՝ վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով 09.11.2021 թվականին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N 289 պայմանագրի (այսուհետ՝ «պայմանագիր») 11.2-րդ կետը՝ կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 պայմանագրի 1.1-ին կետում հանել «և Մոսկվայում» բառերը.

1.2 պայմանագրի 3.1-ին կետում «4495.0 հազար (չորս միլիոն չորս հարյուր իննսունհինգ հազար) դրամ» բառերը փոխարինել «3366.6 հազար (երեք միլիոն երեք հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր) դրամ» բառերով.

1.3 պայմանագրի 1.1-ին կետում «Հավելված» և 3.1-ին կետում «Հավելվածի» բառերը համապատասխանաբար փոխարինել «Հավելված N 1» և «Հավելված N 1-ի» բառերով.

1.4 պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Եզրափակիչ դրույթներ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մաս:

2.2. Սույն համաձայնագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ
Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան,Գևորգ Չաուշի 50
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011032878	Հ/Հ 900018001355, ՀՎՀՀ 01203298
ՀՎՀՀ 02698732	Հեռ.՝ 35 70 11, 096 45 57 78
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրենի պաշտոնակատար՝
---------- Վ. Գասպարյան	---------- Ծ. Սողոմոնյան
Կ.Տ.	Կ.Տ.